

**ՍՔ. ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱՆԻ ԵՒ
ՍՔ. ՍՏԵՓԱՆՈՍ ՆԱԽԱՎԿԱՅԻ ՎԱՆՔԵՐԸ
ԱՐՄԵՆ ՀԱՆՆԱԶԱՐԻԱՆ**

**THE MONASTERIES OF ST. THADDEUS
THE APOSTLE AND ST. STEPANNOS NAKHAVKA
ARMEN HAGHAZARIAN**



«Երկիր և մշակոյթ» կազմակերպութիւնը հիմնադրուել է 1977 թ. Փարիզում Գեղամ Գևորգեանի ջանքերով:


Կազմակերպութեան նպատակն է սփիւռքահայ երիտասարդների մասնակցութեամբ վերականգնել հայկական ճարտարապետութեան ժառանգութիւնները և դրա միջոցով ազգային պատկանելիութիւնը ամրացնել նրանց մէջ: «Երկիր և մշակոյթ»-ի առաջին ծրագրերը ձեռնարկուել են Պարսկաստանի Ատրպատական մահանգներում գտնուող Սր. Թադէոս Առաքեալի և Սր. Ստեփանոս Նախավկայի վանքերում, ինչպէս նաև Սուրիոյ Զեսաբի Սր. Ստեփանոս եկեղեցում:

Հայաստանի հանրապետութիւնում աշխատանքները սկսել են 1988 թ. երկրաշարժից յետոյ և վերականգնուել Գոգարանի Սր. Աստուծածին եկեղեցին, Տաթևի Սր. Մինաս եկեղեցին և Սաղմոսավանքի գեղեցկատեսիլ համալիրը: Արցախում վերանորոգուել են Զարինտակ գիւղի մշակոյթի տունը, դպրոցն ու եկեղեցին:

Land and Culture Organisation was established in 1977 in Paris with the effort of Gegham Gevonian.

The Organisation pursues the objective of engaging the Diaspora youth in the reconstruction of the Armenian architectural heritage in order to strengthen the feelings of national identity among them. The first projects of the Organisation have been initiated in the Monasteries of Saint Thaddeus and Saint Stepanos of Nakhavka, located in the Azerbaijani provinces of Iran, as well as in the Saint Stepanos Church in Kesab, Syria.

Following the earthquake in 1988 the Organisation extended its activities to Armenia proper. The Organisation has contributed to the reconstruction of the Virgin Mary Church in Gogaran. Repairs have been undertaken at the Saint Minas Church of Tatev and the Magnificent complex of Sagmosavank. In the Karintag village of Artsakh the cultural centre, the school and the church have been repaired with the engagement of the Organisation.



Սբ. Թադէոս Առաքեալի վանք

Աշխարհագրական դիրքը:

Թադէոս առաքեալի վանքը գտնուում է Պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի Արտազ գաւառում, Մակու քաղաքից 23 կմ հեռավորութեան վրայ (ուղիղ գծով), ծովի մակերևոյթից 1830 մ բարձրութեան վրայ:

Սովսէս Խորենացին այս գաւառը յիշում է Շաւարշական անուամբ:

Արտազ գաւառը իր տարածքով այսօր համապատասխանում է Իրանի Արևմտեան Ատրպատական նահանգի Մակուի շրջանին, որը Փոքր Մասիս լեռան ստորոտից տարածուում է դէպի հարաւ-արևելք, մինչև Հեր (Խոյ) և Չարևանդ (Մալմաստ) գաւառները:

Վանքի պատմութիւնը:

Թադէոս առաքեալի վանքի հիմնադրութիւնը հայկական աղբիւրների վկայութեամբ, վերաբերում է 40-41 թ. , երբ Քրիստոսի աշակերտներից Թադէոս և Բարդուղիմէոս առաքելները քարոզչութեան նպատակով եկան Հայաստան:

Հայաստանում Արշակունի քագաւոր Սանատրուկն ու իր դուստր Սանդուխտը ընդունում են քրիստոնէութիւնը, սակայն կարճ ժամանակից յետոյ, քա-

The Monastery of Thaddeus the Apostle

Geographic location. The Monastery is located in the Artaz District of Vaspourakan province of Historic Armenia, 23 kilometres away from the town of Maku, at 1830 metres above sea level. The Armenian historian Movses of Khoren names the district "Shavarshakan". The Artaz or Ake' district now corresponds to the Maku district of the Iranian province of Azerbaidjan (Atrpatagan in Armenian), which extends from the Massis mountain (Lesser Ararat) to the south-east, up to Her and Zarehvand districts (today Khoy and Salmas).

Historic background.

According to Armenian sources the establishment of the Monastery relates to the years 40-41 AD, when the two disciples of Jesus Christ, Apostles St. Thaddeus and St. Bartholomew travelled to Armenia in order to preach Christianity. In Armenia the King Sanatroug and his daughter Sandoukht embraced Christianity but after a short period under the influence of political considerations the King renounced Christianity, reverting to the pagan religion and started to persecute

ղաքական պատճառներով Սանատրուկը վերադառնում է հեթանոսութեանը, և սկսում քրիստոնեաների հալածանքը, որին զոհ են գնում առաքելները: Թագաւորը չի խնայում նոյնիսկ իր հարազատ դուստր Սանդուխտ կոյսին, երբ նա մերժում է հօր պահանջը՝ հրաժարելու քրիստոնեութիւնից. «...Այս Սանատրուկս նահատակեաց զԹադէոս առաքելսն եւ զօրորդն իւր զսուրբն Սանդուխտ ի Յարտազ եւ զսուրբն Բարդուղիմէոս ի Յաղբակ եւ զսուրբն Յուդայ Յորմի...»:¹

Հավատացեալները Թադէոս առաքելի աճիւնը ամփոփում են նահատակութեան վայրում գտնող ժայռին կից, իսկ Սանդուխտ կոյսին հողին են յանձնում մօտակայ բլրի բարձունքում:

Ըստ V դարի պատմիչների՝ Արտազ գաւառն ունեցել է առաջնորդական թեմ: Առաջնորդներից յիշում են Չաքարիա վարդապետը, Ստեփան վարդապետը և նրան յաջորդած Իսրայէլ եպիսկոպոսը, բայց վանքի մասին որևէ տեղեկութիւն չկայ: Յովհան Մամիկոնեանը հաստատում է, որ Արտազ գաւառում են Թադէոս առաքելի նշխարները:²

V դարում Ավարայրի Վարդանանց պատերազմը նկարագրող Եղիշէ և Ղազար Փարպեցի պատմիչները այս վանքը չեն յիշատակում, ինչից կարելի է

the Christians. St Thaddeus and St. Bartholomew succumbed to this persecution and were martyred. The King did not even spare his daughter – the Virgin Sandoukht, who refused to renounce her new faith.¹ The followers of Christ buried the remains of St. Thaddeus in a grave near the place of his martyrdom and the body of Virgin Sandoukht was laid to rest on the top of a nearby hill.

According to the 5th century historians, the district of Artaz has had its own diocese whose leaders, Fathers Zakarya and Stepan as well as Bishop Israel are named. However, there is no information regarding the Monastery itself.

Hovhan Mamikonian confirms that the remains of St. Thaddeus are located in the Artaz district of Vaspurakan.² The 5th century chroniclers Eghishe (Elishe) and Ghazar Parbetsi (Lazar of Parb) in their description of the battle of Avarair, known as the Vardanantz Battle, do not mention this Monastery. This implies that the believers, having kept the name of the Apostle Thaddeus in living memory and tradition, built the Monastery some centuries later, possibly on the foundations of an existing heathen temple.



եզրակացնել, որ ժողովուրդը աւանդաբար պահել է երկու մահատակների յիշատակը, իսկ Թադէոս առաքեալին նւիրած նոյնանուն վանքը կառուցել է դարեր յետոյ, հաւանաբար հեթանոսական տաճարի հիմքերի վրայ:

VIII դարի սկզբում՝ Յովհան Օճնեցի և Վահան Մամիկոնեան իշխանների օրոք, տեղի է ունենում Թադէոս առաքեալի և Սան-

At the beginning of the 8th century, during the reign of Princes Hovnan Odznetzi and Vahan Mamikonian, the remains of St. Thaddeus and Virgin Sandoukht were discovered.³ St. Thaddeus is mentioned by Tovma Ardzrouni in the early part of the 10th century, more detailed information is given by S. Anetzi a century later. More detailed information about the Monastery can be found in the



դուխտ կոյսի գիտ նշխարացը.
«... Թաթևոս Առաքելուն եւ
Սանդղտայ Կոյսին մարմինն ի
Հայոց թվականին ՃՀ (721) -ին
գտվելի հրաշօք եւ զարմանալի
բանիք»:³

X դարի սկզբի դեպքերի
առնչությամբ Թովմա Արծրու-
նին առաջին անգամ յիշում է
Սբ. Թադէի վանքը, որպէս եպիս-
կոպոսանիստ: Դրանից մէկ դար
յետոյ յաջորդում է Անեցու ավե-

Armenian literature and memoirs
of various travellers from the 10th
century onwards.

In 1247 The Catholicos of All
Armenians Costantin Bardzerber-
dtsi decreed on the boundaries of
the Monastery and its adjacent
lands.⁴ He subsequently sent pre-
sents to the Monastery in recogni-
tion of the honourable service of
the Monks. Taking advantage of

լի ստոյգ տեղեկութիւնը:


X դարից մինչ մեր օրերը՝ հայ մատենագրութեան մէջ և տարբեր ուղեգրութիւններում, վանքի մասին աւելի մանրամասն տեղեկութիւններ են պահպանվել:

1247 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցին գրութեամբ հաստատել էր առաջնորդանիստ (եպիսկոպոսանիստ) վանքի վիճակը (սահմանները):⁴ Ի թիվս առավել «... պատուաւոր վանորայս...» կաթողիկոսը նաև ընծաներ էր ուղարկել վանքին: Օգտւելով ժամանակի ընձեռած հնարաւորութիւնից կաթողիկոսը վանքի առաջնորդ Յովսէփ վարդապետին ցուցաբերել էր անհրաժեշտ նիւթական օժանդակութիւն, որպէսզի վարդապետն իրականացներ նախընթաց շրջանում թուրք-սելջուկների ու նաև վրացիների կողմից ավերած վանքի վերաշինութեան գործը:


Մոնղոլ-թաթարական տիրապետութեան ժամանակ, վանքի վերաշինման աշխատանքներին ընթացք տալու համար, Յովսէփ վարդապետին անշուշտ անհրաժեշտ էր նաև նրանց բարեհաճութիւնը, մանաւանդ որ թաթար զօրապետ Անագուրակ-Նուինի ամառանոցային նստավայրն էլ գտնվում էր վանքին շատ մօտ: Ուստի վանահայրը ներկայանում է զօրապետին, ստանում ակնկալած բարեհաճութիւնն ու լծում աշխատանքի:⁵

the favourable conditions of peace the Catholicos has also rendered financial assistance to Father Superior Hovsep in order to contribute to the repairs of the earlier damages inflicted on the Monastery by the Selucide Turks and the Georgians. In order to continue the repairs during the rule of the Moguls, Father Hovsep seeks the favour of Commander Anagurak Nouin. Such favour was of particular importance as the summer residence of the Mogul Commander was located in the vicinity of the Monastery. With such favour granted, Father Hovsep dedicates himself entirely to the completion of the repair works.⁵

The importance of the Monastery is further underlined by the fact that in 1285 Levon III, the Armenian King of Cilicia, who had travelled to Atropatene for negotiations with the Mogul Arghun Khan, visited the Monastery accompanied by Thoros the Philosopher, whose head at the time was Bishop Der Diratzu.⁶ With its restoration the Monastery renewed its intellectual activities as well. Regretfully only few of the manuscripts from the Monastery have survived to our times. The oldest among them is a manuscript created by writer Restakesi in



Տեղի կարևորությունը, որպես կրօնական ուխտատեղի, ընդգծում է մաս այն փաստով, որ 1285 թ. Կիլիկիոյ Հայոց թագաւոր Լևոն Գ-ն, մոնղոլ Արղուն խանի հետ քաղաքական բանակցութիւնների նպատակով դէպի Ատրպատական կատարած ճամփորդութեան ժամանակ, Թորոս փիլիսոփայի ընկերակցութեամբ այցելում է Թադէոսի վանք, որի առաջնորդն էր Տէր Տիրացու եպիսկոպոսը:⁶ Միաբանութեան վերահաստատմամբ բնականաբար վերականգնում է մաս վանքի մշակութային գործունէութիւնը: Յավոք, վանքում ստեղծւած միայն հատուկէնտ ձեռագրեր են փրկւել ու մեզ հասել: Դրանցից



around 1315, at the time of leadership of Father Superior Zakaria.⁷

Under more than two centuries of Mogul rule the Monastery was destroyed many times and was heavily taxed. The earthquake of the year 1319 completely ruined the Monastery, where 75 of the monks also perished. Chamchian writes, “there was a great quake which destroyed the Monastery and the Church as well as many houses”.⁸

The work of reconstructing the Monastery took ten years and the reconstruction was completed in 1329. Inscriptions about this

հնագոյնն է Արտազի առաջնորդ Չաքարիայի վանահայրութեան շրջանում 1315 թ. գրիչ Ռստակէսի հեղինակած «Ներսիսի Շնորհալոյ Մեկնութիւն Սաղմոսաց»-ը:⁷

Նոյն Չաքարիայի առաջնորդութեան ժամանակ, 1319 թ. տեղի ունեցաւ Արտազի ուժեղ երկրաշարժը: Վանահայրը լծում է վերաշինութեան գործին. «Ի ՉԿԸ թվին եղև ահագին շարժ յարեւելս. եւ զԹաղեոս առաքելոյն վանքն եւ զեկեղեցին կործանեաց՝ եւ գտունսն փոյց եւ ՀԵ ոգի եսպան, զոր դարձեալ վերստին շինեաց զեկեղեցին եւ զվանքն տէր Չաքարէ...»:⁸ Աշխատանքները տևում են 10 տարի և ավարտում 1329 թ.: Այս աշխատանքների մասին վկայող արձանագրութիւնը գտնւում է եկեղեցու ներսի հիւսիսային պատին:

1340 թ. Մեսրոպ վարդապետ Արտազեցին միաբանութեան համար հոգևոր ուսմունքի բարձրագոյն լսարան է բացում և շնորհիւ իր ձեռք բերած համբավի՝ 1359 թ. ընտրւում է Ամենայն Հայոց կաթողիկոս: Մինչև XII դարի երկրորդ կեսը, վանքն ունենում է համեմատաբար բարւոք վիճակ: Չաքարիա վարդապետի օրոք վերանորոգւում են վանքի յարակից շէնքերն, իսկ ժամատունը նոր ծածկ է ստանում, բացւում է դէպի Մակու տանող ճանապարհը:

1515 թ. Չաքարիան ընտր-

reconstruction work appear on the interior northern wall of the church.

In 1340 Father Mesrop Artazetsi inaugurated an institution of higher theological education and because of it became so famous that in 1359 he was elected as the Catholicos of all Armenians. Until the second part of the 17th century the Monastery enjoyed relative prosperity. During the stewardship of Father Zakaria the buildings adjacent to the Monastery were renovated and the church roof was rebuilt and the road leading to the town of Maku was opened. In 1515 Father Zakaria was elected as the Catholicos of all Armenians.

The Turkish-Persian wars started and in 1603 Shah Abbas the Great of Persia forcefully uprooted hundreds of thousands of the Armenians of Nakhidjevan and drove them to New Djulfa near Isfahan. During this period the Monastery was time and again vandalised and plundered. In 1650 Bishop Mkrtich in spite of his financial difficulties, repaired the church and his successor, Isahak of Maku, repaired the Monastery fortifications in 1664. Considerable repairs were further undertaken in the years 1679-1685. Father Sarkis



ում է Ամենայն Հայոց կաթողիկոս: Սկսում են թուրք-պարսկական երկարատև պատերազմները: 1604 թ. Իրանի Շահ Աբբաս քազաուրը, հարիւր հազարաւոր հայերի Նախիջևանից և Ջուղայից բռնագաղթեցնում է Պարսկաստան: Այդ տարիներին վանքը, բազմիցս ւտերում ու կողոպտում է, այնպէս, որ 1650 թ. Սկրտիչ եպիսկոպոսը, հակառակ տնտեսական նեղ պայմաններին նորոգում է եկեղեցին, իսկ իր յաջորդը՝ Իսահակ Մակունցին՝ 1664 թ. վանքի պարիսպները: Նորոգչական նշանակալից աշխատանքներ են կատարում մահ 1679-85 թթ. «Շինեցուցանեք զգալիքն սուրբ եւ զքրահացն ամբարով սրբատաշ քարիւ եւ այլ շինուածք եւս: Եւ զսուրբ տաճարն սպիտակացեալ տեսանեն աչօք եւ ապա մարմնոյ եւ արեան ճաշակման արժանացեալ մեռանիմ...»:⁹

Սարգիս Կաֆայեցի վանահայրը 1692 թ. վերստին նորո-

Kafayetzi undertook further repair work in the church, the southern, partly western and northern monastic cells were also repaired. He also enlarged the utilities and fortified the walls of the Monastery. These works were carried out during the years 1692-1694.

The Monastery suffered new damages as a result of the earthquake in 1696, though fortunately there were no human losses.¹⁰ Further damages were inflicted during the renewed Turkish-Persian wars of 1734. A water mill with adjacent granary were erected in 1787, the spring well was repaired in 1793. The wooden cross was replaced by one made of stone in 1794. In 1819 Father Superior Simeon Bznouni, after obtaining permission from the Persian Viceroy Abbas Mirza removed the western facade of the

գում է եկեղեցին և հարաւային կողմի խցերը, նաև ընդարձակում է վանքի տնտեսական բաժինն ու ամրացնում վանքի պարիսպները, 1693 թ. տնտեսատունը, 1694 թ. սեղանատունը և արևմտեան ու հիւսիսակողմի խցերի կէսը:

1696 թ. վանքը վնասեց երկրաշարժից. «... սուրբ Թադէոս առաքելոյ պարիսպն հանդերձ նորակերտ խցերօքն բլաւ եւ Կաթողիկէն յարեւելեայ կուսէ պատառեցաւ եւ Վանից գեղն այլ բլաւ, բայց մարդոյ վնաս ոչ արար»:¹⁰

1734 թ. վերսկսած բուրք-պարսկական պատերազմները նորից մեծ վնասներ են հասցնում վանքին և միաբանութեանը:

1787 թ. կառուցում է ջրաղացը՝ ամբարով հանդերձ, իսկ 1793 թ. նորոգում է աղբիւրը:

1794 թ. փայտեայ խաչկալը փոխարինում է քարաշէնով:

1819 թ. վանահայր Սիմէոն Բզնունին՝ Պարսից փոխարքայ Աբբաս Միրզայի հովանաւորութեամբ, քանդել է տալիս եկեղեցու արևմտեան ճակատն ու ձեռնարկում նրան միացած նոր եկեղեցու կառուցումը ճերմակ քարերով: Շինարարութիւնը տևում է մինչև 1820 թ.՝ անաւարտ թողնելով միայն զանգակատունն ու արսիղների տանիքի լրացուցիչ մասերը:



1827 թ. ավարտում է ռուս-պարսկական պատերազմը և



church and built an adjoining church with white stones. By 1820 the church was complete and only the belfry and the roof of the apses were not completed.

In 1827, as a result of the Treaty of Turkomanachai, the territories of the Monastery were left inside Persia. Subsequently more than 40,000 Armenians of the Atrpatagan (Azerbaijan) district abandoned their ancestral homes and moved to the north of the Araxes River, into the Russian held territories. The 80 Armenian villages around the town of Maku, some of which belonged to the Monastery were left derelict.

Stripped of its income, the Monastery of St. Thaddeus and the Monastery of St. Stepannos (which was in the same predicament) were merged in 1841 with the approval of Holy Echmiadzin. They came



համաձայն Թուրքմենչայի դաշնագրի, Ատրպատականից ավելի քան 40.000 հայեր թողնում են իրենց պապեմական տունն ու անցնում սահման դարձած Արաքս գետը: Դատարկում են մահա Մակու քաղաքի շրջակայ համարեա 80 գիւղերը, որոնց մի մասը վանքապատկան էր:

Եկամտի կարևոր աղբիւրից կտրելով՝ 1841 թ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի համաձայնութեամբ, երկու վանքերի՝ Թադեոս առաքելաի և Ստեփանոս Նախավկայի առաջնորդարանները միատեղելով հիմնում են Ատրպատականի Հայոց Թեմը՝ կենտրոն ունենալով Թաւրիզը:



XIX դարավերջից մինչև Առաջին Աշխարհամարտը, այս վանքը «Մենաւորի վանք» ծածկանունով, դառնում է հայ յեղափոխական զինատար խմբերի՝ Վասպուրական տանող կարևոր փոխադրավայրը:

1918 թ. յունիս ամսին, Օսմանեան բանակները, Մակուի խանի զինորդներն ու հազարների հասնող քուրդ խուժանը շրջապատում են վանքը: Մի քանի գիւղերի հայութիւնը, ապաւինած վանքի պարիսպներին 33 օր դիմադրում է, սակայն զինամթերքի սպառման պատճառով, յուլիսի 2-ին թշնամին ներս է մտնում, կոտորում ժողովրդին, կանանց ու երեխաների մի մասը գերի տանում: Թալանում է եկեղեցին և իր գաղտնարանը, այդ քում վանքի խորհրդանշը՝

under the jurisdiction of the Diocese of Atrpatagan, having its centre in the city of Tabriz.

Between the end of the 19th century and the beginning of the World War One, the Monastery was known under its pseudonym “The Lonely Monastery”, for it served as an underground transit point for the armed Armenian irregulars on their way to Vaspourakan. In June 1918 the Ottoman regulars joined by the soldiers of the Khan of Maku as well as the Kurdish hoards surrounded the Monastery, where the Armenian population of the surrounding villages had found refuge. The Armenians defended themselves for 33 days, until their ammunition ran out and on July the 2nd the Turks breached the fortifications. A wholesale massacre of the defendants followed, with a

few women and children being spared, who were taken into slavery. The Church and its treasury were pillaged and the important symbol of the Monastery, the right hand of St. Thaddeus went missing. After the War some Armenian families from the surrounding villages, who had miraculously survived the genocide returned to the Monastery and lived in the cells until 1946, when they were repatriated to Armenia.



Թաղէոս առաքեալի Աջը:

Կոտորածից հրաշքով փրկւած մի քանի գիտացի ընտանիքներ, վերադառնում են և բնակւում վանքի խցերում մինչև 1946 թ., երբ ներգաղթում են Հայաստան:

Վանքի վերջին վանահայրը՝ վարդապետ Զաքերիոնի Պետրոս Ղազարեանը փոխադրւում է Թաւրիզ և վախճանւում է 1948 թ.:

1954 թ. Ատրպատականի Հայոց Առաջնորդարանը, յովիս ամսի վերջին՝ Սբ. Թաղէոս առաքեալի տօնին, ուխտագնացութիւն է կազմակերպում դէպի վանք, ինչը խթան եղաւ 1969-1970 թ. վերակառուութիւնը: Աշխատանքները կատարւում են Պարսկաստանի պետական՝ «Սիրասէ Ֆարհանգի» (Մշակոյթի ժառանգութիւն) հաստատութեան կողմից: Տնտեսականի մի մասը յատկացնում էր Փարիզում հաստատւած «Երկիր և Մշակոյթ» կազմակերպութիւնը: 1976 թ. ամենուրեք արծարծւում է վանքի կարևորութիւնն ու շէնքերի վերանորոգման անհրաժեշտութիւնը:

1988 թ -ից ի վեր վանքերին վերահասու միջքեմական յանձնախումբը և «Սիրասէ Ֆարհանգին» միատեղ տնօրինում են վանքի վերանորոգման աշխատանքները:

Վանքի ճարտարապետութիւնը: Վանքը պարսպա-

The last Father Superior of the Monastery, Father Kajberouni Petros Ghazarian moved to Tabriz, where he died in 1948.

In 1954, the Armenian Diocese of Atrpatagan arranged the first pilgrimage to St. Thaddeus Monastery, which took place during the Saints name day at the end of the month of July. This pilgrimage acted as the starting point for the renovation of the Monastery in 1969-70. The repairs were carried out under the supervision of the Iranian Governmental organisation of “Mirase Farhangi” (Cultural Heritage). Part of the funds for the renovation work were provided by the Paris based Land and Culture Organisation (Organization Terre et Culture), who as of 1976 started its relentless campaign concerning the importance of the Monastery and the need for the reconstruction work.

From 1988 onwards, the “Mirase Farhangi” and the Armenian Diocesan Committee appointed for the supervision of the reconstruction work, are jointly managing the reconstruction and repair work in the Monastery.

The Architecture. The Monastery is surrounded by fortifications, having eight round towers

պատ է, և անկիւնները ամրացւած են ութ բոլորածև աշտարակներով:

Վանքի համալիրը բաժանւած է երկու մասերի՝ եկեղեցին և վանականների խցերը, ապա տնտեսական բաժինը՝ ձիբհան, խոհանոց և շտեմարաններ:

1319 թ. երկրաշարժից յետոյ մայր եկեղեցին վերակառուցել է սրբատաշ մուգ բազալտ քարով: Եկեղեցին դռսից ուղղանկիւն, ներսից խաչաձև կենտրոնագմբէթ սրահ է՝ աւագ խորանով և կից երկու աւանդատնով: Եկեղեցու ուղղահայեացութիւնը շէտում են 12 նիստանի թմբուկն ու վեղարը:

Եկեղեցին ընդլայնելու նպատակով՝ 1819 թ. քանդում են շէնքի ժամատունն ու եկեղեցու արևմտեան ճակատը և Էջմիածնի տաճարին յար և մման քառամոյթ եկեղեցի կառուցելով, միացնում եղած եկեղեցուն: Այս շէնքը ևս ունի 12 նիստանի թմբուկ ու վեղար: Կառուցել է ճերմակ քարով, որը բերել են Կորդս-Բուլաղ գիւղի մօտի հանքավայրից: Անաւարտ են մնացել եկեղեցու արևմուտքում գտնուող զանգակատունն ու խորանների ծածկերը:

Որքան զուսպ է Սր. Թադէոսի հին եկեղեցու արտաքինը, այնքան ճոխ է նոր կամ ճերմակ եկեղեցին իր զարդաքանդակներով, որոնք կարելի է

at its corners. The complex is divided into two sections, one part includes the Church and the cells, and the other part has the service area as well as the oil press, the kitchen and the stores.

After the earthquake of 1319 the church has been reconstructed with finely finished dark basalt slabs. The exterior of the church is rectangular but the interior is cross-shaped, with a central dome and the main altar flanked on both sides with vestries. The vertical aspect of the church is accentuated by the drum, supported with 12 columns and topped with the conical capped dome.

In order to expand the church, the western wall of the church and the belfry were demolished in 1819 and were replaced with another church, the replica of Holy Echmiadzin, connected to the old church. This new church too has a drum with 12 supporting columns and a conical dome, but is constructed with white stones, brought from a quarry near the village of Kurch-Bulakh. Only the belfry to the west of the church and the roof of the apses are left incomplete.

In contrast with the sombre and simple exterior of the old church, the new white church has

չորս մասերի բաժանել: Ներքևում՝ կամարակապ որմնասիւներով շրջանցում պատի բաժանումները զարդարւած են մեծ մասամբ խաչի և կենաց ծառի որմնաքանդակներով: Այնուհետև, դէպի վեր՝ եկեղեցին շրջանցում են երկու զարդագօտիներ, որոնցից առաջինը զուտ բուսական է, իսկ երկրորդում կան առասպելներից և աշխարհիկ կյանքից քաղած պատկերներ: Քիւերով սահմանափակող յաջորդ մասում սրբերի բարձրաքանդակներն են՝ իրարից որմնասիւներով բաժանւած: Կառոյցը երիզող վերջին մասը միւսների համեմատ պարզ է և աւարտւում է քիւով:

Սբ. Թադէոսի ճերմակ եկեղեցու զարդաքանդակներում կարելի է տեսնել նաև պարսկական Սաֆաւի շրջանի ճարտարապետութեան որոշ մանրամասներ, յատկապէս նկատելի է նաև X դարասկզբին կառուցւած Աղթամարի Սբ. Խաչ տաճարի ազդեցութիւնը:

Վանքից դէպի հիւսիս՝ բարձունքին, երկու կանգուն և մի աւերակ մատուռներ կան, որոնցից՝ ժայռին կից կիսակլոր զմբէթով մատուռը՝ Սբ. Նահատակաց և ավելի փոքրը՝ Սբ. Աստուածածին է կոչւում:

Վանքին մօտ, ժամանակին հայաբնակ Ղարաքիլիսա գիւղում, կանգուն է մնացել փոքր եկեղեցին, իսկ ատելի հեռու՝ վան-

elaborate decorative carvings on the exterior. These can be divided into four categories. At the lower level, the sections of the walls, surrounded by arched columns are mainly decorated with Khachkars (stone-crosses) and "tree of life" carvings. Further up the church has two belts of carvings, one purely with botanical designs & the other with carvings depicting daily life and scenes from mythology. At the next level, separated with cornices, stand the figures of the saints, separated by wall columns. The uppermost part is relatively simple and ends with yet another cornice.

The influence of the Islamic Safavid architecture can be noted in some of the details of the carvings of the white church. Here the influence of the carvings of the 10th century Holy Cross Cathedral of Aghtamar Monastery near Van is particularly noticeable.

To the north of the Monastery, on a hill there stand two chapels, together with the ruin of the third one. The chapel next to the rock with a semicircular dome is called the Holy Martyr and the other, smaller one is called Holy Mother of God. Near the Monastery, in the once Armenian village of Gharakilisse (in Turkish - the Black Church) the small village church is still intact. To the south

քի հարաւում, բլրի գագաթին է
նստած նշանաւոր Սբ. Սան-
դուխտ կոյսի մատուռը:

of the Monastery, on the top of a
hill stands the famous Chapel of
“Virgin Sandoukht”.

- 1 «Մանր ժամանակագրութիւններ»,
հատոր Բ, Երևան, 1956, էջ 314:
- 2 Հովհան Մամիկոնյան, Տարոնի
պատմութիւն, Երևան, 1989, էջ 32:
- 3 «Մանր ժամանակագրութիւններ»,
հատոր Ա, Երևան, 1951, էջ 203:
- 4 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն
Հայոց, Երևան, 1961, էջ 311:
- 5 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն
Հայոց, Երևան, 1961, էջ 311:
- 6 Ոսկեան, Հ. Վասպուրական - Վանի
վանքերը, Վիեննա, 1942, հատոր Բ,
էջ 470:
- 7 «ԺՌ դարի հայերեն Ձեռագրերի
հիշատակարաններ», Երևան, 1950,
էջ 114:
- 8 Սամուէլի քահանայի Անեցոյ
հաւաքմունք ի գրոց պատմագրաց,
Վաղարշապատ, 1893, էջ 157:
- 9 «Մանր ժամանակագրութիւններ»,
հատոր Ա, Երևան, էջ 309:
- 10 Նշվ. աշխ., էջ 284:

- 1”Manr Zhamanakagroutunner”,
Volum II, Yerevan, 1956, p. 314
- 2 Hovhan Mamikonian, “History of
Taron”, Yerevan, 1989, p. 32
- 3 ”Manr Zhamanakagroutunner”,
Volum I, Yerevan, 1951, p. 203
- 4 Kirakos Gandzaketsi, “The
Armenian History”, Yerevan,
1961, p. 311
- 5 Kirakos Gandzaketsi, “The
Armenian History”, Yerevan,
1961, p. 311
- 6 H. Voskean, “The Monastries of
Vaspourakan - Van”, Volume II,
Vienna, 1942, p. 470
- 7 “Register of Armenian Manuscripts
of the XIV century”, Yerevan,
1950, p. 114
8. “Historical records collected by
Father Samvel of Ani”,
Vagarshapat, 1893, p. 157
9. “Manr Zhamanakagranner”,
Volume I, Yerevan, 1951, p. 309
10. *ibid*, p. 284

**Սբ. Ստեփանոս
Նախավկայի վանք
Մաղարդայ վանք,
Դարաշամբի կամ Շամբի
վանք**

Աշխարհագրական դիրքը:

Վանքը գտնուում է Պատմական Հայաստանի Վասպուրական նահանգում, այժմ Իրանի Ատրպատական նահանգի հիւսիսում, Ջուֆա քաղաքից շուրջ 18 կմ արևմուտք, Արաքս գետին ուղղահայեաց մի ձորակում:

Վանքը կառուցւած է Մաղարդայ լեռան ստորոտին, բարձրադիր և ծառապատ վայրում: Վանքից դէպի հիւսիս՝ Արաքս գետի մյուս ափին, բարձրանում են Գողթնի չոր և ժայռոտ լեռները:

Ջուֆայից դէպի վանք տանող ճամփի ձախ կողմում գտնուում է Սբ. Անդրէոսի մատուռը: Արաքս գետի միւս ափին, Հին Ջուղայի գերեզմանատունն է՝ հարիւրաւոր մարդահասակ խաչքարերով, որը որպէս ճարտարապետական ամբողջութիւն՝ համարւում է ուշ միջնադարի հայ քարարեստի եզակի նմուշը:

Վանքին մօտ՝ 3 կմ արևմուտք, այնտեղ, ուր Տղմուտ (Աքչայ) գետը քափւում է Արաքս գետը, Դարաշամբ գիւղի աւերակներն են, որտեղ միայն կանգուն է մնացել XVII-XVIII դ. պատկանող եկեղեցին:

Վանքի պատմութիւնը:

Ստեփանոս Նախավկայ վանքի

**The Monastery of Saint
Stepannos Nakhavka, also
known as the Monastery
of Maghard or Monastery of
Darashamb**

Geographic location.

The Monastery is located in the Vaspourakan province of Historic Armenia, which today lies in the north of the Iranian province of Azerbaidjan, (Atrpatagan in Armenian). It is located 18 kilometres to the West of the town of Julfa on a slope leading towards the river Arax.

The Monastery was built on the foothills of the Maghard mountain, on a hill covered with trees. On the North of the monastery across the Arax river rises the rocky and arid mountain range of Goghtan. The chapel of Saint Andre՝ the Son lies on the left side of the road leading from Julfa to the Monastery. The Armenian cemetery of Old Julfa, with hundreds of old and unique Khachkars (Cross stones) which are as tall as a man, lies on the northern bank of the Arax river across the Monastery. The architecture of this cemetery as a whole is considered as a unique example of late medieval Armenian stonemasonry. A church built in the 17th or 18th century is the only structure still standing where the village of Darachamb once was. The village of was located three kilometres to



հիմնադրման թականը յայտնի չէ: Ըստ աւանդութեան՝ վանքի հիմնադիրը Բարդուղիմէոս առաքեալն է եղել, որը քարոզչական աշխատանք է տարել Նախիջևանում, ապա Վասպուրականի Աղբակ գաւառում, ուր և նահատակել է:

Ստեփանոս Նախավկա վանքի անւան առաջին յիշատակութիւններից մէկը 966 թ-ից է: Դա վանքում գտնւած, բայց յետոյ Սբ. Էջմիածին փոխադրւած, ապակեայ խաչի պատւանդանին փորագրւած երկաթագիր մի արձանագրութիւն է. «Յիշատակ է սուրբ խաչս Յովհաննէս Թագավորին Հայոց եւ կողակցին Շուշան տիկնոջ և որդոյն Աշոտ թագաւորին: Բազում զօրօք եկի սուրբ ոխստս, եղու Շամբայ ջաղացներն, Երասխի նաւն, Աստապատու հողն՝ սուրբ Նախավկային, յիշատակ

the West of the Monastery, where the river Tghmut (now called Akchay) and Arax merge.

Historic background. The exact date of establishment of the Monastery is not known. According to tradition the Monastery was established by the Apostle Bartholomew himself, who was preaching in the town of Nakhichevan, then located in the Aghbak district of Vaspourakan province of Armenia. He was subsequently martyred in the same town. Later on another monastery was actually constructed on the very spot where St Bartholomew was martyred and which bears his name. This was located in the “Valley of the Armenians” (Hayots Dzor) located in Aghbak province.

One of the first written records about the Monastery is dated 966. It is an inscription from the

մեզ եւ ծնողաց մերոց, թվին ՆԺԵ (966)»:¹

976 թ. Խաչիկ Արշարունի Կաթողիկոսի կոնդակում Բարդուղոմէոս առաքեալը յիշում է որպէս վանքի հիմնադիր, այդտեղ նաև հաստատում են հարկատու կալածների սահմանները:²

Նոյն թականին է պատկանում Աշոտ Ողորմած Բագրատունի թագաւորի նւիրագիրը, ուր յիշում են նաև Մաղարդայ վանքի թեմերը:

981թ. Աշոտ Ողորմած թագաւորի դուստր Հռիփսիմէի կտակագիրը հաստատում է, որ վանքի երեք տաճարները՝ Սբ. Աստուածածինը, Սբ. Գեորգն ու Սբ. Թադէոսը խախտած էին, և իր հօր հրամանով վերակառուցում են:

XI դ. սելջուկների տիրապետութեան շրջանում, վանքին վերաբերող տեալները պակասում են, մինչև որ Ստեփանոս Օրբելեանը նկարագրում է 1143 թ. վանքում ծաւալած գործունեքիւնն ու յիշատակում վանահօր Տէր Բարսեղի անունը:


Պատմական աղբիւրներում մի քանի անգամ յիշում է վանքի ձեռագրատունն ու գրադարանը: Այսօր Էջմիածնում է գտնուում Ստեփանոս Նախավկայ վանքի 1178 թ. արձանագրութեամբ փղոսկրե կողով Աւետարանը:

Սոնդուկների տիրապետութեան կշտագայ շրջանում՝ XIII-XV դ., վանքին վերաբերող տեղեկութիւնները պակասում են:

Monastery, which later served as a socle for a glass cross in memory of Shushan and her son King Ashot.¹ The Holy Cross was later moved to St Etchmiadzin. In an encyclical by the Catholicos Khachik Ardzrouni in the year 976 the Apostle Bartholomew is mentioned to be the founder of the Monastery. Therein are also specified the land boundaries and the tax status of the Monastery.² About the same time King Ashot Bagratouni the Merciful issued a dedicatory epistle where the dioceses of the Maghard Monastery are mentioned.

The Last Will and Testament of King Ashot's daughter, written in 981 mentions the churches of St Mary Mother of God, St. George and St. Stepannos, which were reconstructed according to the royal decree issued by her father.

During the 11th century Seljuk rule information about the monastery is scarce. In 1143 however, Stephan Orbelian gave details of the activities within the Monastery and mentions by name Ter Barsegh (Basil) as the Father Superior of the Monastery. Later the scribe Michael the Syrian confirms this. On other occasions historical sources mention the depositary of manuscripts and library of the Monastery. An ivory-backed gospel bearing the date 1178 together with the inscription of "Monastery of Stepannos Nakhavka" today can be found in



1270թ. Վարդան Բարձր-
բերդու աշխատութեան մէջ
յիշում է մենաստանը, ապա
1330 թ. վերաբերող մոնղոլ Աբու
Սաիդ իլխանի հրովարտակը,
որտեղ ներկայացած են վան-
քապատկան կալածները:³

Այսուհետ մեզ հասած ձե-
ռագրերը, կոնդակներն ու նա-
մակները առանց մեծ ընդհա-
տումների տալիս են XV դ-ից
մինչև այսօր վանքի շարունա-

the library of Holy Etchmiadzin.

There is a continuous scarcity
of information about the
Monastery during the Mongol rule
in Armenia (13th to 15th cen-
turies). In 1270 Vardan
Bardzrabetsi mention the
Monastery in one of his studies. In
the year 1330 in a decree issued by
the Mongol ruler Abu Said Il-
Khani the Monastery land holdings
are confirmed.³ Thereafter manu-

կական պատմութիւնը:

Գրիգոր Ակնեցիւն 1427 թ. յիշում է վանքն ու այն կոչում «Նշանաւոր»: XV-XVI դարերից Երևանի Մատենադարանում, ինչպէս նաև Նոր Զուղայի գրադարանում պահուում են Ստեփանոս Նախավկայի վանքում գրած բազմաթիւ ձեռագրեր, որոնք վկայում են վանքի համեմատաբար ծաղկուն վիճակն ու այնտեղի հոգևոր-մշակութային գործունէութիւնը:⁴

XVII դարի թուրք-պարսկական երկարատև պատերազմներն ու Նախիջևանի հայութեան բռնագաղթը դէպի Պարսկաստան՝ վանքին զրկում են իր հաւատացեալ ու հարկատու ժողովրդից և տնտեսական ծանր վիճակ ստեղծում:

Մելքիսէք կաթողիկոսի 1614 թ. կոնդակը, ինչպէս նաև Սովետ կաթողիկոսի 1631 թ. գրութիւնները վանքին դրամահաւաքի իրաւունք են տալիս, և յորդորում են ժողովրդին իրենց օժանդակութիւնը չխնայել կանգուն պահելու այս կարևոր հոգևոր կենտրոնը:

1633 թ. Յակոբ Զուղայեցիին նշանակում է վանքի վանահայր:

Ըստ XVII դարի պատմագիր Առաքել Դարիժեցու՝ վանքն այնքան խարխուլ վիճակում էր, որ Յակոբ Զուղայեցիին ստիպւած հիմնովին վերակառուցում է եկեղեցին ու նորոգում համալիրի տարրեր մասերը և հեռուում

scripts, encyclicals and epistles give us, without notable interruption, the continuous historical picture of the Monastery from the 15th century to our times.

In 1427 Grigor Aknetsi mentions the Monastery with its three churches and qualifies them as “famous”. The Yerevan Manuscript Depository (Matenadaran) as well as the New Julfa library have many manuscripts produced in the Monastery of St. Stepannos Nakhavka dating from the

Dating from the 15th and 16th centuries. These testify to a monastic environment where the intellectual and spiritual activities were earnestly pursued.⁴

As a result of the lengthy hostilities between the Ottoman Empire and Persia and the subsequent forced resettlement of Nakhichevan Armenians in Persia during the 17th century the Monastery faced serious financial problems. An encyclical dated 1614 by Melikset Catholicos and an epistle dated 1631 issued by Catholicos Movses III Tatevatsi formally give authority to the Monastery to raise funds from the faithful for the preservation of the spiritual centre.

In 1633 Hagop Jughayetsi was installed as the Father Superior of the Monastery. According to the 17th century historian Arakel Davrizhetsi the Monastery build-



գտնող ակից ջուրը խողովակներով հասցնում վանքին:

Շինարարական այս աշխատանքները տևում են 12 տարի, որին առնչող հակիրճ արձանագրութիւնը պահպանւած է եկեղեցու արևելեան պատի հիւսիսային անկիւնում. ԹԻԻՆ ՌԴԲ (1643) ՀԻՄՆԱՐԿԵՅԱԻ ԹԻԻՆ ՌՃԴ (1655) ԱԻԱՐՏԵՅԱԻ:

Եկեղեցու և վանքի ներկայ

ing was in such a state of disrepair that the Superior was compelled to rebuild the whole church and renovate different parts of the complex. Further more he installed pipes to bring drinking water to the Monastery from a nearby spring. These large-scale constructions lasted 12 years. An inscription on the Northern corner of the Eastern wall of the church mentions that “The construction began in the year

տեսքը, արդիւնքն է այդ գործունէութեան:

1655 թ. Յակոբ Զուղայեցին ընտրուում է Ամենայն Հայոց կաթողիկոս, և փոխադրուում էջմիածին:

Շինարարական այս գործունէութիւնը շարունակում են Յովհաննէս, Պետրոս ու Յակոբ Շամբեցի վանահայրերը և վերականգնում վանքի արևմտեան պարիսպը, ճաշարահը, վանականների խցերն ու զանգակատունը:

1759 թ. Միքայել վարդապետի օրոք, երկրաշարժը ւերում է եկեղեցու տանիքը, վնասում խցերը և փլեցնում պարսպի հարաւային կողմը:

1759 թ. Յակոբ Շամախեցու և 1780-ին Դուկաս կաթողիկոսի կոնդակները հաստատում են վանքում ստեղծած դժարին կացութիւնն ու տնտեսական հնարատրութիւնների պակասը:

1826 թ. Սարգիս վարդապետի օրոք, եկեղեցին ներսից նորոգւում է և Նաղաշ (նկարիչ) Հովնաթանի որմնանկարներով հարստանում:

Ռուս-պարսկական պատերազմները աւարտում են Թուրքմենչայի դաշնագրով, ըստ որի՝ Արաքս գետը դառնում է երկու երկրների սահմանը:

Պարսից Ֆաթալի շահն ու թագաժառանգ Աբբաս Միրզան աշխատում են տնտեսապէս օժանդակել վանքին, որը կտրուել էր սահմանի միւս կողմում

1643 and ended in the year 1655”.

The present configuration of both the Monastery and the church are the result of this reconstruction effort. In 1655 Hagop Jughayetsi was elected as Catholicos of All Armenians and moved to St. Etchmiadzin. The Monastery Superiors Hovhannes, Petros and Hagop Shambetsi undertook further construction. The Western fortifications of the Monastery and the bell-tower were re-built as well as the refectory and the Monks' cells.

In 1759 under the rule of Father Michael an earthquake destroyed the roof of the church, damaged the cells and wrecked the southern side of the fortifications. The very same year and later in 1780 Hagop Shamakhetsi and Ghoukas (Lucas) Catholicos confirm the financial problems faced by the Monastery in their encyclicals. About fifty years later in 1826, during the leadership of Father Superior Sarkis the church and particularly its interior was renovated, frescoes were executed by the painter Nagash Hovnathan giving the church a renewed splendour.

The Russo-Persian hostilities ended in 1828 under the Treaty of Torkamanchai. By virtue of this treaty the river Arax became the international border between the two countries. The consequences of this Treaty were dire for the




գտնող իր հարկատու ժողովրդից, և հայաբնակ Դարաշամբ գիւղի կալածները նւիրում են վանքին:⁵

1840 թ. երկրաշարժից նորից վնասուում է զանգակատունը, որը նորոգում է 1845-ին, իսկ եկեղեցու տանիքը՝ 1865-66 -ին:

1917-20 թ. վանքը չորս անգամ թալանում է տեղի թուրքերի կողմից և եղած գրքերը եկեղեցում հրդեհում են:

Առաջին աշխարհամարտից յետոյ դարաշամբցիների մի մասը վերադառնում է գիւղ, մի քանի ընտանիքներ էլ հաստատում են վանքում, որոնք ներգաղթի տարիներին՝ վերջնականապէս փոխադրում են Հայաստան կամ բնակութիւն հաստատում Թաւրիզում:



Monastery, since it was deprived of the support of the Armenians of Nakhichevan and the levies paid by the Armenians of the Goghtan province. To avert crisis economic aid was given to the Monastery by the Persian Fath-Ali Shah and his Regent Abbas Mirza. They gave the Monastery the lands of the Armenian-inhabited village of Darashamb.⁵ In 1840 the bell-tower was once again damaged by an earthquake and was repaired in 1845. The church roof underwent further repairs between 1865 and 1866.

Between the years 1917 and 1920 on four different occasions the Turkish inhabitants plundered the Monastery and set the library

Տակավին 1948 թ. վանահայր սարկավագ Տիգրան Դարբինեանը նշել է. «...դարաւոր վանքի փլուզումին և անոր գիւղացիների չարքաշ և սովալլուկ կենցաղին...» վերաբերող մամբանասներն ու հղել Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ Զ. Չորեքեանին:⁶

1983 թ-ից պետական «Միքսէ Ֆարհանգի» (Մշակոյթի ժառանգութիւն) հաստատութեան կողմից վանքում վերանորոգութեան աշխատանքներ են տարւել: Մասնաւորապէս նորոգւել են եկեղեցու տանիքն ու յարակից խցերը: «Երկիր և մշակոյթ» կազմակերպութիւնը, տարիներ շարունակ ահազանգել է վանքի վտանգաւոր վիճակի մասին ու դրամահաւաքի հատոյթը տրամադրել այս գործին:

Ճարտարապետութիւնը:

Վանքը՝ իր համարեա քառանկիւնի յատակագծով, պարսպափակ է, անկիւնները ինչպէս և արևելեան ու հիւսիսային պատերը կիսակլոր աշտարակներով ամրացւած:⁷



Գլխաւոր մուտքը գտնուում է վանքի արևմուտքում՝ համալիրը մասերի բաժանող ներս ընկած տարածութեան մէջ:

Վանքը բաժանւած է երեք մասերի: Միջին տարածքում է մուտքի սրահը, որտեղից աստիճանները բարձրանում են դէպի քառասիւն կամարածածկ խուհանգը: Աստիճանների երկու կողմերում, երկու հարկերի վրայ

on fire. After the First World War a number of Armenians from Darashamb village returned to their ancestral homes. A few families elected to settle within the confines of the Monastery. In 1948-1949 some of these families were repatriated to Armenia while the others chose to move to Tabriz. In his letter to the Catholicos of All Armenians Gevorg Chorekchian dated 1948 Father Tigran Darbinian gives detailed description of the damages inflicted on the Monastery, the famine and the sufferings of the villagers.⁶

Since 1983 the Iranian State Agency “Mirase’ Farhangi” (Cultural Heritage) has made funds available for the renovation of the Monastery. The church roofs as well as the cells have been renovated. The Paris based Armenian organisation “Land and Culture Organisation-LCO” (Organisation Terri et Culture - OTC) has been relentlessly warning everyone about the precarious state of the Monastery and the urgent necessity of raising funds for its restoration.

Architecture of the Monastery. The Monastery buildings are grouped in two internal courtyards, the whole complex is square in shape and is equipped with fortifications having semi-rotunda towers.⁷ The main entrance is located on the West within the exterior recess whereby



տարբեր մեծութեամբ տնտեսական բաժնի սենեակներն են:

Վանքի հիւսիսային բաժնի կենտրոնում Սբ. Ստեփանոս Նախավկայ եկեղեցին է, որին կից և իր ու պարբայի միջև ընկած տարածքում է գտնուում յետագայում անելացւած միանաւ, քաղակիր կամարներով ծածկւած Պօղոս-Պետրոս եկեղեցին:

Մայր եկեղեցու հարաւում զանգակատունն է, որի առաջին երկու հարկերը քառանկյուն են, իսկ երկրորդ հարկը բաղկացած է ութ կամակարապ սիւներից, որոնց վրայ նստած է սրածայր վեղարը:

Արևելեան պարսպին կից՝ վանականների խցեր են:

Համալիրի հարաւում, կենտրոնական բակի արևմուտքում վանականների երկշար և երկհարկ խցերն են, հարաւում՝ վանահօր բնակարանն ու ձեռագրատունը, իսկ արևելքում՝ Վահան իշխանի սրահը, սեղանատունն ու յարակից սենեակները:

Եկեղեցու պատերն արտաքուստ կառուցւած են սրբատաշ բաց և մուգ սրճագոյն կրաքարից, իսկ ներսը աղիւսապատ է և ծեփւած կրաշաղախով:

Եկեղեցին, դրսից քառանկյունի, ներսից խաչաձև, եռաբսիդ, չորս երկհարկանի աւանդատներով և շէշուած խորանով կենտրոնագմբէթ շէնք է:

Եկեղեցու կենտրոնում բարձրացող քմբուկը 16 միստանի է, որի վրայ նստած է հովհարաձև վեղարով աւարտող գմբէթը:

the complex is divided into two. The Monastery is made up of three sections. The middle section is the entrance, which leads to the main hall from where a stairway leads to an arched kitchen with four columns. On either side of the stairway lie the two floors with various rooms, which act as larders and food storing facilities.

The church of Stepannos Nakhavka is located in the northern enclosure. The single nave church of St. Paul and St. Peter with its slate covered arches was later built adjacent to the main church in the area between the church and the fortification walls. The bell-tower is located to the south of the main church. The first two floors of the bell-tower are square shaped and the third floor is made of eight arched columns that support the capped cupola.

The cells adjacent to the eastern walls are monks' cells. In the Southern courtyard of the complex there are further monks' cells, which are two storied. Next to them are the Father Superior's quarters and the library. The Vahan Mamikonian hall and the refectory are situated to the east.

The exterior of the church is faced with polished tufa stone of light and dark brown colour. The interior is brick covered with lime aggregate. From the exterior the church looks square but inside it is cross shaped and three apsed, with a central dome. The side apses are seven pillared and the vestries in

Եկեղեցու արտաքին ճակատները՝ հյուսկէն հորիզոնական զարդագօտիով, երկու մասերի են բաժանում: Եկեղեցու արևմտեան ճակատը տարբերում է միւսներից ուղղահայեացութիւնը շէշտող՝ ներս ընկած երեք խորշերով, որոնք շրջանցւած են կամարներով և կիսակլոր երիզով: Երկու արտաքին խորշերը ծածկւած են նիրատունների և ուխտատոբների արձանագիր խաչքարերով: Կենտրոնական խորշում եկեղեցու մուտքն է՝ ագուլիսիների նիրած փայտէ գեղեցիկ դուռը:

Տասնեակ խաչքարեր զարդարում են նաև եկեղեցու արևելեան և հարաւային պատերը:

Արևելեան ճակատում խորանի խաչքաւ ակնատը շրջանակւած է զարդաքանդակներով, որից վեր է գտնուում վանքը խորհրդանշող բարձրաքանդակը՝ «Ստեփանոսի քարկոծումը»: Արևելեան ճակատը ասարտում է վարդաքանդակներով և շէնքի պահապան արծաւաքարով:

Հեռուից իսկ ուշադրութիւն գրաւող եկեղեցու գմբէթը վանական համալիրում իշխող հանգամանք ունի:

16 նիստանի թմբուկը հարուստ է զարդասիւններով և զարդակամարներով, խաչքար և վարդեակներով, հրեշտակներով, մասնատրապէս՝ 16 սրբերի բարձրաքանդակներով:

Արևմուտքում՝ Յիսուս Քրիստոսի, արևելքում՝ Յովհաննէս Սկրտչի, հիւսիսում՝ Մարիամ

the two corners are two storied. The central drum of the church has 16 columns and is covered with fan shaped capped dome.

The exterior facades of the church are divided into two sections by means of interwoven, ornamental stripes. The western facade differs from the others by having three recesses, which are capped by arches and semi-circular stripes. The decorative Khachkars donated by the church benefactors and pilgrims are installed in the two outside recesses. The central recess leads to the main entrance of the church with its elaborately carved wooden door donated by the population of the town of Agulis. Scores of Khachkars decorate the eastern and southern wall of the church.

On the eastern facade, the altar ogive is framed by decorative carvings above which one can see an important carving relating to the Monastery, that of the stoning of St Stepannos Nakhavka. The eastern facade ends with carving of roses and an eagle – the guardian of the Monastery.

Viewing from a distance, the attention is drawn to the dome of the church, which dominates the Monastery complex.

The 16 pillars of the drum and the interconnecting arches are reach with decorative carvings, Khachkars, roses and angels, in particular with the carved statues of the 16 saints. These consist of the carvings of Jesus Christ on the

Աստածածնի, հարաւուն՝ Գրիգոր Լուսաւորչի և յաջորդաբար 12 առաքեալների բարձրաքանդակները:

Թմբուկը աւարտում է հովհարաձև վեղարով, որի ջրթողները (ջրհորդան) կենդանակերպ արձանիկներ են, իսկ հովհարների անկիւններին կանգնեցւած են քարակերտ թևավոր խաչեր:

Եկեղեցին ներսից ծեփւած է, որի վրայ տեղ-տեղ պահպանւել են XIX դարի որմնանկարների մնացորդներ:

western column, John the Baptist on the eastern, Mary Mother of God on the northern and St. Gregory the Illuminator on the southern columns. The 12 apostles are carved on the remaining columns. Stone crosses seat on the corners of the fan shaped cupola.

The interior of the church is plastered on the surface of which, in some places the remains of the 19th century frescoes are still visible. The paintings belong to the school of Hovnatanians, who decorated the churches of the Goghtan province in the 18th and 19th centuries.

1 Բասմաջեան Կ., Մեր Հնոթիւնները, «Բանասէր», 1902, N4, 15 98:

2 Ոսկեան Հ., Մաղարդա Նախապկայի վանքին կոնդակները, «Հանդես ամսօրեայ», 1941, էջ 230-234:

3 Փափագյան Հ., Երկու նորայայտ իլխանական յառիկներ, «Բանբեր Մատենադարանի», Ն6Երևան, 1962, էջ 391:

4 Ոսկեան Հ., Նախնավանի վանքերը, «Հանդես Ամսօրեայ», 1941, էջ 204:

5 Փափագյան Հ., նշվ. հոդաւոր, էջ 392:

6 ՀՀՊՊԿԱ, ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 4243, թերթ 4-5:

7 Hartmut Hofrichter, Das Klosier Sdepannos Nachawega in der iranischen Provinz Aserbaidshon «Revue des études Armeniennes, IX, Paris, 1972, էջ 193-239:

1 K. Basmajian, "Our heritage", "Banaser", 1902, No. 4, 15, 98

2 H. Voskean, "Decrees of the Malarda of Nakhavka Monastery", "Handes Amsorya", 1941, p.p. 230-234

3 H. Papazian, "Yerku norahayt Il-Khanian Yarlikner", Banber Matenadarani", No. 6, 1962, p. 391

4 H. Voskean, "Monasteries of Nakhjevan", "Handes Amsorya", 1941, p. 204

5 H. Papazian, "Yerku norahayt Il-Khanian Yarlikner", "Banber Matenadarani", No. 6, 1962, p. 392

6 Armenian State Archives No. 409, list 1, file 4243, p.p. 4-5

7 Hartmut Hofrichter, Das Klosier Sdepannos Nachawega in der iranischen Provinz Aserbaidshon «Revue des études Armeniennes, IX, Paris, 1972, էջ 193-239:

Սր. Թադէոս Առաքեալի եւ Սր. Ստեփանոս Նախավկայի
վանքերը

The Monastries of St. Thaddeus Apostle and
St. Stepannos Nakhavka

Խմբագիր՝ Լաուրա Մանուկյան
Թարգմանիչ՝ Զոհրաբ Մնացականյան
Էջադրող՝ Սյուզի Մաշուրյան

Editor: Laura Manoukyan
Translator: Zohrab Mnatsakanyan
Page maker: Susy Mashuryan

«Ռուբին» տպագրական ԱԶ
Երեւան-33, Գյուլբենկյան 38
Printed by “Rubin” Individual Enterprise

Այս Գրքոյկը նւիրում ենք «Երկիր եւ մշակոյթ» կազմակերպութեանը
եւ շնորհաւորում տարիների իր նւիրյալ գործունէութիւնը:

«Հայկական ճարտարապետութիւնն ուսումնասիրող» կազմակերպութիւն

*This book is dedicated to the "Land and Culture" Organisation in recognition of many
years of its activities and devotion to the nation.*

"Research on Armenian Architecture" Organisation

